РОСГОССТРАХ

«ԲՆԱԿԱՐԱՆ ԱԿՏԻՎ» ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրական դեպք են համարվում հետևյալ իրադարձությունները.

- **Բնակարանի ներքին հարդարանքի և/կամ ինժեներական սարքավորումների վնասումը** հրդեհի (ներառյալ այրման նյութերի, ինչպես նաև հրդեհի մարման համար օգտագործված ջրի(փրփուրի) կամ այլ նյութերի) հետևանքով: Հրդեհի ժամանակ գույքի վրա անուղղակի ազդեցություն են համարվում նաև կողմնակի երևույթները՝ մրոտումը (ծխոտումը), մակերեսային հալումը, պայթյունի, կայծակի, տրանսպորտային միջոցների վրաերթի և/կամ կենդանու հետ բախման, ապահովագրության օբյեկտի վրա թռչող սարքերի, դրանց մասերի, բեռի և/կամ ծառերի վայր ընկնելու արդյունքում, այդ թվում սեփականության նկատմամբ հանցագործությունները՝ կոտրանքով գողություն, ավազակություն, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում (վնասում):
- **Երրորդ անձանց (հարևանների) կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնասի պատճառումը** հրդեհի, պայթյունի, ջրի արտահոսքի և այլ ռիսկերի ի հայտ գալու դեպքում:

Ապահովագրության չեն ընդունվում

- Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնցում իրականացվում է կապիտալ վերանորոգում կամ որոնք ունեն կապիտալ վերանորոգման կարիք
- Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնք ներառված են տարաբնակեցման պլաններում մոտակա 12 ամիսների ընթացքում
- Խարխուլ շինությունները, որոնց ֆիզիկական մաշվածությունը կազմում է 75 և ավելի տոկոս:
- 150 քառ.մ գերազանցող մակերես ունեցող բնակարանները
- Վթարային վիճակում գտնվող կամ քանդման ենթակա շենքերում գտնվող բնակարանները:
- Փայտից տները և շինությունները , ինքնակամ կառույցները:

Ապահովագրական պատահարից բացառություններ՝

- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն,
- Ռազմական գործողություններ, զորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ,
- Աղտոտվածության կամ կոռոզիայի ազդեցություն,
- Բնական մաշվածություն,
- Ջերմային վերամշակման ընթացքում գույքին պատճառված վնասը
- Պայթուցիկ նյութերի պատճառված վնասումը, որոնք օգտագործվել են ապահովագրության օբյեկտի հասցեում
- Ապահովագրության օբյեկտի հասցեով առևտրային գործունեության արդյունքում պատճառված վնասը (այդ թվում՝ կրակով մշակում կամ այլ ջերմային եղանակով դրա վրա ազդեցություն (օրինակ՝ չորացում, եփում, արդուկում, ապխտում, տապակում, տաք մշակում, ոչ հրդեհի հետևանքով առաջացած այրում և այլն),
- Ապահովագրված անձի /նրա ընտանիքի անդամների/մերձավոր ազգականների կողմից կամ մասնակցությամբ դիտավորությամբ պատճառված վնասը և այլն:

Ապահովագրողն ազատվում է քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական հատուցում իրականացնելու իր պարտավորությունից, եթե

- Ապահովագրական պատահարը հանդիսացել է Ապահովադրի (Ապահովագրված անձի) /նրա ընտանիքի անդամների /մերձավոր ազգականների դիտավորյալ գործողությունների հետևանք,
- Ապահովադրի (Ապահովագրված անձը) անհրաժեշտ ինքնապաշտպանության արդյունքում վնաս է պատճառել այլ անձի (Շահառուի), որն անմիջական ոտնձգություն է իրականացրել Ապահովադրի (Ապահովագրված անձի)՝ օրենքով պաշտպանված իրավունքների և շահերի նկատմամբ:

Այլ պայմաններ՝

- Ապահովագրությունն իրականացվում է առանց գույքի զննման:
- Առաջին ռիսկի հատուցման պայմանով (հատուցումը հաշվարկվում է վնասի չափով `ապահովագրական գումարի սահմաններում՝ առանց վնասի չափի նկատմամբ ապահովագրական գումարի և գույքի շուկայական արժեքի հարաբերության համամասնություն կիրառելու):
- Հատուցումն իրականացվում է ` հաշվի առնելով մաշվածությունը:
- Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ չի կիրառվում:

Ի՞նչ պետք է անել Ապահովագրական պատահարի դեպքում

1. Անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) հայտնել Ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի առաջացման մասին՝ զանգահարելով **(012) 88 88 88** շուրջօրյա հեռախոսահամարով:
2. Ապահովագրական ընկերությանը ներկայացնել դիմում-պահանջագիր ապահովագրական հատուցման մասին, ինչպես նաև ապահովագրության պայմաններով սահմանված այլ ուղեկցող փաստաթղթեր:

Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցումը կատարվում է համաձայն Ապահովագրական ընկերության Ապահովագրության պայմանների: Ապահովագրության պայմանների մանրամասներին կարող եք ծանոթանալ ` այցելելով ապահովագրական ընկերության ստորև նշված web կայքը:

Ապահովագրության շրջանակներում տրամադրվում է բանկային քարտերը RFID հանցագործություններից պաշտպանող դրամապանակ:

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 10) 59-10-10, (012) 88 88 88
Վեբ կայք՝ www.rgs.am